ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 5 հոկտեմբերի

Համազգային մեծ յոբելեանի տօնակատարութեանը մասնակցում է նաև Թաւրիզը։ Առաջնորդարանում տեղի ունեցած խորհրդակցական ժողովում որոշվեց՝ երեք ուսումնարանների միացած ոյժերով կատարել մեծ հանդէսը՝ տօնակարգի մշակութիւնը յանձնելով յանձնախմբի ձեռնհասութեան։

Փափագելի էր արդարև, որ ձեռնարկվէր հանգանակութեան պարսկահայերի կողմից ևս ի նպաստ դպրոցական ֆոնդի, որով իրականութիւն գտնէր այն միտքը, որ ֆոնդը լինի ընդհանուր, որից օգտվեն նաև թիւրքահայերն և պարսկահայերը։

Երէկ Թաւրիզում կայացած թեմական պատգամաւորական ժողովում ընտրվեցին 2 պատգամաւորներ՝ պ.պ. Զ. Նալբանդեան և Կարապետ Աբեան՝ Ատրպատականի կողմից ներկայ լինելու համար Էջմիածնի Մեծ Յոբելեանին։

Վաղը, հոկտ. 6-ին, թեմական ներսէս վ. Մելիք-Թանգեան կուղևորվի Էջմիածին՝ Վեհափառի հրաւէրով՝ Թաւրիզի կենտր. ուսումնարանի գործի վերջնական կարգադրութեան համար կտակակատարների հետ բանակցելու։

Նոր ընտիր երկու պատգամաւորները մեկնել են Թաւրիզից դէպի Ջուլֆա։ Հ.